

COVID-19 պատվաստանյութեր. Աշխատանքի առողջության և անվտանգության տեղեկատվություն գործատուների և փոքր ձեռնարկությունների համար

Պատվաստումներ և աշխատանքի և առողջության անվտանգության պարտականություններ

Համաձայն աշխատանքի առողջության և անվտանգության օրենքների՝ դուք պետք է ապահովեք ձեր աշխատողների, ձեր և աշխատավայրում աշխատող մյուսների անվտանգությունը այնքանով, որքանով այն գործնականում հնարավոր է: Հնարավոր է, դուք չկարողանաք լիովին վերացնել COVID-19-ին ենթարկվելու աշխատողների ռիսկը աշխատավայրում: Սակայն, դուք պետք է անեք այն ամենը, ինչ հնարավոր է՝ նվազագույնի հասցնելու այս ռիսկը:

Աշխատավայրում ռիսկերը նվազեցնելու համար, դուք պետք է՝

- իրականացնեք ռիսկերի գնահատում
- հաշվի առնեք վերահսկման միջոցառումները և, թե ինչպես դրանք կօգնեն կառավարել ռիսկերը, ներառյալ՝ ֆիզիկական հեռավորությունը, պատշաճ հիգիենան և կանոնավոր մաքրումը, ինչպես նաև առկա պատվաստանյութերը
- խորհրդակցեք աշխատողների և առողջության և անվտանգության ներկայացուցիչների (HSRS) հետ՝ COVID-19-ի և վերահսկման միջոցառումների մասին, այդ թվում՝ պատվաստանյութերի մասին
- որոշեք, թե որ միջոցառումներ են գործնականում հնարավոր իրականացնել ձեր աշխատավայրում:

Արդյո՞ք ես պետք է ներառեմ պարտադիր պատվաստումը՝ որպես վերահսկման միջոցառում՝ իմ աշխատանքի առողջության և անվտանգության պարտականությունները բավարարելու համար

Քիչ հավանական է, որ պատվաստման պարտադիր պահանջը գործնականում հնարավոր լինի կիրառել աշխատանքի առողջության և անվտանգության օրենքների համաձայն:

Արդյոք դուք պետք է պահանջեք ձեր աշխատողներին պատվաստվել, կախված է ձեր կողմից ռիսկի գնահատման պահին առկա հանգամանքներից: Դիմեք խորհրդատվության, եթե դուք մտածում եք պահանջել ձեր աշխատողներին պատվաստվել և հաշվի առնեք աշխատավայրում հարաբերությունների, խտրականության և գաղտնիության հարցերը:

Հնարավոր է լինեն [հանրային առողջապահության հրահանգներ](#), որոնք պահանջում են, որ որոշ ոլորտների աշխատողներ պատվաստվեն: Տեղեկացված եղեք ձեր առողջապահական գործակալության խորհուրդներին:

Կարո՞ղ եմ պահանջել հաճախորդներին ապացուցել, որ նրանք արդեն պատվաստվել են՝ նախքան կայցելեն իմ աշխատավայր

Քիչ հավանական է, որ աշխատանքի առողջության և անվտանգության օրենքները պահանջեն ձեզ հարցնել հաճախորդներին և այցելուներին տրամադրել ապացույց պատվաստման մասին: Նախքան այսպիսի պահանջ պարտադրելը՝ դիմեք խորհրդատվության, քանի որ կարող են գաղտնիության և խտրականության հարցեր լինեն:

Կարո՞ղ եմ իմ աշխատողները հրաժարվել աշխատելուց, քանի որ մեկ այլ աշխատող չի պատվաստվել

Համաձայն աշխատանքի առողջության և անվտանգության օրենքների, աշխատողը կարող է դադարեցնել կամ հրաժարվել իրականացնել աշխատանք, եթե նրանք ունեն ողջամիտ մտահոգություն որևէ անմիջական կամ մոտալուտ վտանգի հետևանքով առաջացած առողջության կամ անվտանգության լուրջ ռիսկի մասին:

Շատ հանգամանքներում, աշխատողը չի կարողանա ապավինել աշխատանքի առողջության և անվտանգության օրենքներին՝ դադարեցնելու աշխատանքը, պարզապես այն պատճառով, որ մեկ այլ աշխատող չի պատվաստվել:

Արդյո՞ք ես պատասխանատվություն կկրեմ աշխատանքի առողջության և անվտանգության օրենքների համաձայն, եթե ես չպարտադրեմ իմ աշխատողներին պատվաստվել և նրանցից մեկը վարակվի COVID-19-ով

Քիչ հավանական է, որ դուք խախտած կլինեք աշխատանքի առողջության և անվտանգության օրենքները պարզապես այն պատճառով, որ դուք չեք պահանջում աշխատողներին ստանալ պատվաստում:

Դուք պետք է շարունակեք իրականացնել բոլոր գործնականում հնարավոր վերահսկման միջոցառումները ձեր աշխատավայրում, ինչպիսիք են՝ ֆիզիկական հեռավորությունը, պատշաճ հիգիենան և կանոնավոր մաքրումն ու պահպանումը, նույնիսկ եթե աշխատողները պատվաստում ստացել են:

Լրացուցիչ տեղեկություններ

- [Առողջապահության և պատվաստանյութերի տեղեկատվություն. Առողջապահության նախարարություն](#)
- [Աշխատանքի առողջություն և անվտանգություն. Անվտանգ աշխատանք Ավստրալիա](#)
- [Աշխատավայրի իրավունքներ. Արդար աշխատանքի իրավապաշտպան](#)